

մօտ համարձակութիւն ունէի, աւելի կը խորացնէի քննութիւններս, ու ան երդում ըրաւ և ըսաւ. «քեզի միայն յայտնեցի՝ որպէսզի ես այս դէպքին մէջ թերի չի գտնուիմ, և կամ մանաւանդ տիմար, և կամ թէ չկարծուի որ ես ուրիշներու համար կատարեցի» (Գ. Թ. էջ 528):

Բ. Ս. ՊԱՐՏԷՋ (ՅՈՎՀ. ԺԹ. 41)

Ս. Պարտէզը Ս. Գերեզմանէն քառասուն ոտք է դէպի հիւսիս. հոն կը տեսնուի մարմարէ սպիտակ բոլորակ քար մը, այս է Ս. Պարտէզը, ուր յետ յարուսթեան՝ մեր Փրկիչը իբրեւ պարտիզպան երեւցաւ Մարիամ Մագդաղենացիին եւ ըսաւ. «մի՛ մերձենար յիս . . .»: Եւ անոր մօտ կը տեսնուի բոլորակ քար մ'ալ, ուր Մագդաղենացին կենալով ըսաւ. «Մաբունի»:

Հնուց ի վեր հայերը Պարսեզ անունը կուտան այս տեղւոյն, ինչպէս նաև այժմ: Այս տեղւոյն վրայ հինէն ի վեր կը կախուէին երկու կանթեղներ, որոնք կը վերաբերէին հայոց, միասին այն փոքրիկ խցովը՝ որ Փրանկաց երգիոնին տեղւոյն ներքեւն էր: Երբ Գըրիգոր Պարոն Տէր պատրիարքը (1613-1645) մեր վերնատան երեք կամարները Փրանկներէն առաւ, Պարտէզի մէկ կանթեղը եւ խուցը անոնց տուաւ (1631). իսկ միւս կանթեղը կը մնայ մշտապա՝ Ս. Պարտէզին վրայ (Հան. 167, 187):

Գ. ԶՈՐՐՈՐԴ ԲԱՆՏ

Ս. Յարուսթեան տաճարին մէջ Քրիստոսի Զորրորդ բանտին մատուռը կը գրաւէ այն տեղը՝ ուրկէ հայոց թափօրը կը սկսի Ս. Յարուսթեան տաճարի շըր-